

## « Բանկային համակարգի 2010-ի երկրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

Հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգը գործել է բնականոն հունով: Չնայած նախորդ եռամսյակի համեմատ որոշ հիմնական ցուցանիշների, այդ թվում՝ ընդհանուր ակտիվների և պարտավորությունների, գծով արձանագրված նվազման ցածր աճի, որը հիմնականում պայմանավորված է եղել դրամի նկատմամբ արտարժույթային փոխարժեքների նվազմամբ, այնուամենայնիվ բանկերը երկրորդ եռամսյակի ընթացքում գործել են արդյունավետ՝ ապահովելով մաքուր շահույթի գծով համեմատական բարձր ցուցանիշ: Միաժամանակ նկատենք, որ բանկային համակարգը դեռ ամբողջովին չի հաղթահարել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները, սակայն առաջընթացը ակնառու է:


### Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2010-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նվազել են 3.4 %-ով կամ 47.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 1,370.6 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է եղել դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի նվազմամբ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն ավելացել էին 0.3 %-ով կամ 3.4 մլրդ դրամով, իսկ այս տարվա առաջին եռամսյակում՝ 5.4 %-ով կամ 72.1 մլրդ դրամով:

### Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 1.0 %-ով կամ 8.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 0.1 %-ով կամ 0.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 838.9 և 87.1 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 6.7 %-ով կամ 52.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 6.6 %-ով կամ 6.2 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև հավելենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն նվազել էին 2.9 %-ով կամ 19.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 24.5 %-ով կամ 18.8 մլրդ դրամով: 2010 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 61.2 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 63.1 %-ը կամ 529.1 մլրդ դրամ, և այս ցուցանիշն երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 2.1 %-ով կամ 10.9 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 5.8 % կամ 23.2 մլրդ դրամ նվազման դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 10.7 %-ով կամ 49.9 մլրդ դրամով:


2010-ի հունիսի 30-ի դրությամբ  
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2010-ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 0.7 %-ով կամ 2.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 277.9 մլրդ դրամ, ընդ որում ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 4.4 % կամ 11.7 մլրդ դրամ: Համադրելու համար նաև նշենք, որ անցած տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը աճել էր 0.5 %-ով կամ 1.3 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 33.1 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 22.4 %-ը կամ 188.2 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 10.3 %-ը կամ 86.6 մլրդ

դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն նվազել է 1.7 %-ով կամ 3.3 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 2.5 %-ով կամ 2.2 մլրդ դրամով, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում նշված ցուցանիշների համապատասխան նվազումները կազմել էին 11.4 % կամ 24.1 մլրդ դրամ և 3.1 % կամ 2.7 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ այս տարվա առաջին եռամսյակում աճ էր գրանցվել ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային վարկերի գծով՝ աճերը կազմել էին համապատասխանաբար 5.1 % կամ 9.2 մլրդ դրամ և 4.4 % կամ 3.8 մլրդ դրամ:


### Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան



### Պարտավորություններ

2010-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,066.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 20.0 %-ով կամ 177.8 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում նվազել է 5.0 %-ով կամ 56.0 մլրդ դրամով, որը պայմանավորված է նաև դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի նվազմամբ: Համեմատության համար նաև նշենք, որ այս տարվա առաջին եռամսյակում ընդհանուր պարտավորությունները աճել էին 5.9 %-ով կամ 63.0 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում նվազել են 4.3 %-ով կամ 15.7 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 12.0 %-ով կամ 47.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջին համապատասխանաբար կազմել 347.2 և 348.3 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային նվազումը կազմել է 5.0 % կամ 13.5 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 9.1 % կամ մոտ 16.8 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ նախորդ եռամսյակում աճ էր գրանցվել վերոնշյալ բոլոր ցուցանիշների գծով. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 6.9 %-ով կամ 23.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 8.5 %-ով կամ 21.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 7.9 %-ով կամ 29.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 1.1 %-ով կամ 2.0 մլրդ դրամով: Համադրելիության համար նշենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 3.4 %-ով կամ 9.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 0.5 %-ով կամ 1.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 2.3 %-ով կամ 6.2 մլրդ դրամով, ընդ որում՝ ժամկետային ավանդները աճել էին 4.7 %-ով կամ 5.5 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 65.2 %-ը, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2.4 տոկոսային կետով:


Հանակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը  
2010-ի հունիսի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)



■ Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ    ■ Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ  
■ Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ    ■ Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Հանակարգում ժամկետային ավանդների  
փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Ընդ. ժամկ. ավանդների    Ֆիզ.անձ. ժամկ.ավանդների    Իր. անձ. ժամկ. ավանդների

■ 2-տն. 2009թ.    ■ 3-տն. 2009թ.    ■ 4-տն. 2009թ.    ■ 1-տն. 2010թ.    ■ 2-տն. 2010թ.

Մլրդ դրամ

### Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան




### Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 2.8 %-ով կամ 8.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 304.3 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի և չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը առաջին եռամսյակում ավելացել է 3.2 %-ով կամ 9.1 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 5.1 %-ով կամ 12.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստի) ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 10.4 %-ով կամ 9.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել մոտ 97.0 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 31.9 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերոնշյալ ցուցանիշը աճել էր 7.8 %-ով կամ 5.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում աճել է 1.3 %-ով կամ մոտ 2.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 195.2 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 64.2 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ էր գրանցվել նաև այս տարվա առաջին եռամսյակում և այն կազմել էր 2.2 % կամ 4.2 մլրդ դրամ: Շարադրվածին միայն ավելացնենք, որ հաշվետու եռամսյակում կանոնադրական կապիտալի համալրում կատարվել է երեք բանկի կողմից:

### Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



### Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 50.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 40.8 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երկրորդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 39.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 35.6 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ այս տարվա առաջին եռամսյակում համակարգում ապահովվել էր 0.4 մլրդ դրամի ավել եկամուտ և կատարվել էր 1.9 մլրդ դրամի ավել ծախս, քան հաշվետու եռամսյակում:


### Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 8.2 մլրդ դրամ մաքուր շահույթ, իսկ առաջին կիսամյակում՝ 14.8 մլրդ դրամ, որը 2009-ի առաջին կիսամյակում ապահոված մաքուր շահույթի ծավալին գերազանցել է 10.4 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ այս տարվա առաջին եռամսյակում համակարգում ապահովվել էր 6.77 մլրդ դրամի մաքուր շահույթ:

### Ամփոփ ցուցանիշներ

2010-ի երկրորդ եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 5.22 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.1 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 3.37 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.7 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2010-ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,  
դրանց աճը/նվազումն երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.  
(մլն դրամ)

Յ/Յ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ- տահույթ II եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ	171497.5	-1.7	1	90695.5	-7.0	134487.2	-2.7	1	23576.4	1.1	37010.3	2.4	1	14567.2	0.0	14730.0	931.7
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	126716.0	-8.7	2	79632.2	-4.1	107902.7	-10.7	2	31988.1	-3.1	18813.3	4.5	5	7556.6	0.0	11059.0	917.1
3	Արդշինհիմնվեստբանկ	111204.6	-5.9	5	57028.8	17.9	83590.8	-8.0	6	26796.1	-13.5	27613.8	1.2	3	15513.6	0.0	8554.9	598.7
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	108826.5	-13.3	6	73914.3	-8.8	82174.3	-17.6	7	21042.5	7.2	26652.2	3.2	4	13906.2	0.0	8972.0	1042.7
5	Կոնվերս Բանկ	75045.3	-6.2	8	46520.1	-4.7	61928.0	-8.1	8	14151.4	-5.0	13117.4	3.8	10	1296.4	0.0	9242.1	502.3
6	Յունիբանկ	106934.2	1.1	7	71841.8	7.4	92696.0	1.0	4	40234.6	-11.8	14238.2	1.4	9	11400.7	0.0	3380.4	-66.5
7	Հայէկոնոմբանկ	45087.5	-3.4	13	25714.6	-7.3	36711.4	-4.6	10	6068.3	-4.8	8376.2	2.4	15	2333.3	0.0	599.1	273.9
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	121368.7	-5.6	3	85441.8	9.2	91043.4	-7.6	5	18291.0	-3.2	30325.3	1.1	2	25477.3	0.0	4689.2	724.4
9	Ինտելոբանկ	46869.9	-2.9	12	32578.9	1.4	35156.6	-6.2	11	8974.6	-9.4	11713.3	8.4	11	2353.2	0.0	7239.4	543.8
10	Հայբիզնեսբանկ	113288.8	-2.2	4	77521.5	-1.9	95896.7	-3.2	3	20448.3	-3.8	17392.1	3.9	6	13450.0	0.0	3794.7	661.3
11	Անելիք Բանկ	50501.4	0.8	9	26223.6	1.4	35107.0	1.1	12	8547.4	0.1	15394.5	0.0	7	14300.0	0.0	1237.0	218.4
12	Առէկսիմբանկ	49207.7	7.8	11	33700.9	32.3	34940.4	10.7	13	8861.2	-3.0	14267.3	1.2	8	12347.3	0.0	1645.1	182.3
13	Արցախբանկ	49875.0	0.1	10	32891.1	-0.7	41547.3	-1.0	9	5499.7	12.1	8327.6	5.4	16	6561.2	18.0	1088.5	652.6
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	42678.9	3.7	14	22275.1	16.8	33151.1	0.6	14	6352.0	1.3	9527.9	16.5	13	7148.0	16.6	2057.8	317.6
15	ԱրմՍվիսԲանկ	31769.3	-13.3	15	12460.8	4.2	23509.5	-16.7	15	2462.8	-7.0	8259.9	-1.9	17	7002.0	0.0	1153.7	166.1
16	Զարգ. Հայկական Բանկ	22532.6	-4.3	18	14006.7	-12.4	15960.0	-6.9	17	5981.7	-17.9	6572.5	2.8	19	4556.7	0.0	1608.7	118.3
17	Պրոմեթեյ Բանկ	24292.3	-4.0	17	15977.3	3.1	14330.4	-7.8	18	1529.3	-1.9	9961.9	2.0	12	7200.0	0.0	2709.7	252.3
18	Բիբլոս Բանկ Հայաստան	25559.5	15.9	16	18659.6	11.0	17182.3	25.3	16	2400.8	9.6	8377.2	0.5	14	8382.2	0.0	-30.2	36.6
19	ԲՏԱ Բանկ	8009.6	2.4	21	4026.9	-0.6	2760.8	5.2	21	693.3	-9.2	5248.8	1.0	21	6520.0	0.0	-1282.9	51.8
20	ՊրոԿրեդիտ Բանկ	19432.4	8.8	20	14703.6	9.0	13697.5	10.2	19	2660.1	-9.2	5734.9	5.6	20	6490.0	6.6	-755.1	-94.1
21	Սելլաթ Բանկ	19872.7	22.4	19	3065.4	-52.5	12545.9	38.1	20	11.6	-28.0	7326.8	2.5	18	6850.0	0.0	401.9	182.6
	Ընդամենը	1370570.4	-3.4		838880.5	1.0	1066319.3	-5.0		256571.2	-5.0	304251.4	2.8		195211.9	1.3	82095.0	8213.9